ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խորհրդային պատմագրության մեջ խորապես քննադատվել է քեմալական Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի պայմանագիրը և ցույց տրվել Մոսկվայի՝ 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի դրական դերը հայ ժողովրդի կյանքում: Բանն այնտեղ էր հասել, որ խորհրդահայ շատ պատմաբաններ, ոչ ավել, ոչ պակաս, արձանագրում էին, թե Ալեքսանդրապոլի պայմանագրով իբրև թե վերականգնվում էին 1918 թ. Բաթումի պայմանագրի պայմանները: Ավելորդ է ասել, որ այդ իրողությունը ցույց է տալիս, թե նրանք չէին էլ բարեհաճել կարդալու Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Թերևս, կարելի կլիներ սրանով էլ ավարտել խնդիրը և նշել, որ տարածքային առումով Մոսկվայի պայմանագիրն անգամ զիջում էր Ալեքսանդրապոլի պայմանագրին: Սակայն երկու պայմանագրերի համադրական քննությունը ցույց տվեց, որ հիշյալ պայմանագրերն իրենց մեջ հետաքրքիր գաղտնիքներ են պարունակում, որոնց քննությունը կամենում ենք հանձնել ընթերցողի դատին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև Ալեքսանդրապոլում կնքված պայմանագրի՝ «Հայաստանի և Թուրքիայի սահմանը սկսվում է այնտեղից, որտեղ Ղարա-սուն թափվում է Արաքսի մեջ մինչև Տիքնիսի (իմա՛ Տիգնիս – Հ. Բ.) հյուսիս-արևմտյան մասը, Մեծ Կեմոյից (իմա՛ Մեծ Ղմլու – Հ. Բ.) դեպի արևմուտք, Կիզիլտայից (իմա՛ Ղըզըլ-Դաշ – Հ. Բ.) դեպի արևմուտք մինչև Մեծ Աղբաբան, այնուհետև Շարուր-Նախիջևանի և Շահթախտի (իմա՛ Շահթախտիի – Հ. Բ.) շրջաններով, որոնք գտնվում են Կակի-դաղ (իմա՛ Կուքի-դաղ – Հ. Բ.), Կամասու լեռ (իմա՛ Գամասուր-դաղ – Հ. Բ.), Ղուրդ-ղուլաղ գյուղ, Սաատ լեռ (իմա՛ Սայաթ-դաղ լեռ – Հ. Բ.)… Սարայ-բուլաղ ... Արարատ կայարան գծից հարավ մինչև Արաքս գետի այն տեղը, որտեղ Ղարա-սու գետը թափվում է Արաքսի մեջ»[1]:

Հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի «Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև» վավերաթղթում ասվում է. «Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը որոշվում է այն գծով, որն սկսվելով Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից, անցնում է Խեդիսմթա սարի վրայով, հետո առաջանում է Շավշետ (իմա՛ Շավշեթ – Հ. Բ.) սարի և Յաննի-դաղ սարի ջրբաժան գծի ուղղությամբ, այնուհետև

[1] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստաթղթերի ժողովածու, կազմեցին՝ Ջ. Մ. Կիրակոսյանը և Ռ. Դ. Սահակյանը, Երևան, 1972, էջ 684:*

շարժվում է Արդահանի և Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ՝ Արփաչայ (իմա՛ Ախուրյան – Հ. Բ.) և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ստորին Կարասուի (իմա՛ Ստորին Ղարա-սու – Հ. Բ.) գետաբերանը (Սահմանագծի մանրամասն նկարագրությունը և դրան վերաբերող հարցերը պարզաբանված են 1 (A) և 1 (B) հավելվածներում և երկու Պայմանավորվող տերությունների կողմից ստորագրված առդրվող քարտեզի վրա)»[2]: Մոսկվայի պայմանագրի թիվ 1 հոդվածում, ինչպես դժվար չէ տեսնել, Թուրքիայի սահմանագիծը տարվում է նախ և առաջ Վրաստանի ՍԽՀ-ի, այնուհետև Հայաստանի ՍԽՀ-ի և Ադրբեջանական ՍԽՀ-ի հետ, որտեղ Հայաստանի ՍԽՀ սահմանագծի համար լրիվ հստակ է, որ այն անցել է Արփաչայ և Արաքս գետերի հնահուներով: Հարցիս մեջ հստակություն է մտցնում թիվ 1 հավելվածը, որտեղից վերցնում ենք միայն Հայաստանի ՍԽՀ-ին վերաբերող հատվածը. «Սահմանագիծը շարժվում է Ուչ-Թափալյար (իմա՛ Ուչ-Թափալար – Հ. Բ.) (9783), Թայս-կալա (իմա՛ Թայս-դալա – Հ. Բ.) (9716)–9065 գագաթը, որտեղ թողնում է Արդահանի մարզի (իմա՛ օկրուգի – Հ. Բ.) նախկին սահմանը և առաջ է շարժվում Մեծ Ախբաբա (իմա՛ Մեծ Աղբաբա – Հ. Բ.) (9973)–8828 (8827)–7602 լեռներով – անցնելով Իրիշ գետից դեպի արևելք ընկած տեղանքով, հասնում է 7518 բարձունքին և հետո Ղըզըլ-դաշ լեռանը (7439) (7490) – Նոր Ղըզըլ-դաշ (Ղըզըլդաշ) գյուղը – Ղարա-Մահմեդից անցնելով դեպի արևմուտք հասնում է Ջամուշբու-չայ գետին [գտնվում է Դելավեր, Մեծ Քմլի (իմա՛ Մեծ Ղմլու – Հ. Բ.) և Թիխնիս (իմա՛ Տիգնիս – Հ. Բ.) գյուղերից դեպի արևելք] – Վարդանլի (իմա՛ Վարդանլու – Հ. Բ.) և Բաշ-Շորագել (իմա՛ Բաշ-Շորագյալ – Հ. Բ.) գյուղերի վրայով, շարժվելով հիշյալ գետի երկայնությամբ՝ Քալալիից (իմա՛ Ղալալի – Հ. Բ.) դեպի հյուսիս, հասնում է Արփա-չայ գետին– այնտեղից շարունակ առաջ շարժվելով Արփա-չայի հնահունով, հասնում է Արաքս գետին – շարժվում է Արաքսի հնահունով մինչև այն տեղը, որտեղ Արաքսի մեջ թափվում է Ստորին Կարա-սուն (իմա՛ Ստորին Ղարա-սուն – Հ. Բ.): (NB Հասկանալի է, որ սահմանագիծն անցնում է վերոհիշյալ բարձունքների ջրբաժան գծի երկայնությամբ)»[3]: Նշված սահմանագծից Հայաստանի ՍԽՀ-ին չի վերաբերում Ղարա-սուից Ստորին Ղարա-սու ընկած հատվածը, որով Թուրքիան, ըստ Մոսկվայի պայմանագրի, պետք է սահմանակցեր Ադրբեջանական ՍԽՀ-ի հետ:

Արդ, ի՞նչ եզրակացությունների կարելի է հանգել բերված տեղեկություններից: Նախ, որ, չնայած ամպագոռգոռ հայտարարություններին, Մոսկվայի պայմանագիրը, փաստորեն, վերահաստատելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը, դեռ մի 150 կմ² էլ զիջում էր Թուրքիային՝ ի վնաս Հայաստանի ՍԽՀ-ի: Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրք-հայկական սահմանագիծն սկսվում էր Մեծ Աղբաբա լեռնագագաթից, ինչը հեշտությամբ բացատրվում է այն իրողությամբ, որ թուրքերի համաձայնությամբ վրացիները ռազմակալել էին Հայաստանի Հանրապետության Արդահանի և Չըլդրրի շրջանները: Սակայն հարկ է խոստովանել, որ քեմալական

[2] *Նույն տեղում, էջ 500:*
[3] *Նույն տեղում, էջ 505:*

Թուրքիայի քաղաքական պլաններում, ինչպես ստորև կտեսնենք, դրանք, ինչպես և Վրաստանի Հանրապետության մեջ մտնող մի շարք շրջաններ, դիտվում էին որպես Թուրքիայի Հանրապետության մասեր:

Զարմանալի ներդաշնակություն կա հիշյալ երկու պայմանագրերում Նախիջևանի հարցում: Այսպես՝ Ալեքսանդրապոլի պայմանագրում ասված է. «Նախիջևանի, Շարուրի, Շահթախտի (իմա՛ Շահթախտիի – Հ. Բ.) շրջաններում, որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով կհաստատվի հատուկ ադմինիստրացիա, Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ ադմինիստրացիայի կարգին, անկախ այն բանից, թե ադմինիստրացիան որ կողմը կթեքվի: Այդ շրջանները ժամանակավորապես գտնվելու են Թուրքիայի պաշտպանության տակ»[4]: Շատ կարևոր է սահմանագծի խնդիրը Նախիջևանի հատվածում. «… այնուհետև Շարուր-Նախիջևանի և Շահթախտի շրջաններով, որոնք գտնվում են Կակի-դաղ (իմա՛ Կուքի-դաղ – Հ. Բ.), Կամասու լեռ (իմա՛ Գամասուր-դաղ լեռ – Հ. Բ.)…, Ղուրդ-ղուլաղ գյուղ, Սաատ (իմա՛ Սայաթ – Հ. Բ.) լեռ…, Սարայ-բուլաղ… Արարատ կայարան գծից հարավ մինչև Արաքս գետի այն տեղը, որտեղ Ղարա-սու գետը թափվում է Արաքսի մեջ»[5]:

Մոսկվայի պայմանագրի թիվ 1 (C) հավելվածում Նախիջևանի տարածքի մասին ասված է. «Արարատ կայարանը – Սարայ-բուլաղ լեռը (8071) – Քյումուրլու-դաղ (6839), (6930)–3080 - Սայաթ-դաղ (7868) և Քուրդ-Քուլաղ (Քյուրդ-քուլաղ) (իմա՛ Ղուրդ-ղուլաղ) գյուղը – Գամեսուր-դաղ (8166) բարձունքը (Գամասուր Դաղ – Հ. Բ.) – Քյուքի-դաղ (1082) (իմա՛ Կուքի-դաղ – Հ. Բ.)»[6]: Թռուցիկ համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ Նախիջևանի հատվածում սահմանագիծը երկու պայմանագրում էլ նույնն է: Կամա թե ակամա հարց է ծագում, թե Խորհրդային Ռուսաստանի համար պայքարը Հայաստանի ՍԽՀ-ի հարցում եղե՞լ է 150 կմ² Թուրքիային զիջելը:

Կա մի հարց ևս, որը այլևայլ մտորումների տեղիք է տալիս: Թե՛ Ալեքսանդրապոլի և թե՛ Մոսկվայի պայմանագրերով Թուրքիային է անցնում Սուրմալուի գավառը, որը գործնականում Օսմանյան կայսրության մաս չի կազմել: Խորհրդային Ռուսաստանը, ճանաչելով Թուրքիայի Ազգային ուխտը, ոչ մի պարտավորություն չուներ այն զիջելու Թուրքիային: Ուստի, եթե ընդունենք, որ Հայաստանի առաջին հանրապետությունը Թուրքիայի ճնշման ներքո ստիպված է եղել այն զիջելու, ապա Խորհրդային Ռուսաստանին ոչինչ չէր պարտադրում Կարսի և Բաթումի մարզերը զիջելուց հետո Թուրքիային հանձնել այդ արգասաբեր գավառը: Քննությունը, սակայն, մեզ բերում է այն համոզման, որ Սուրմալուի խնդրում Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը եկել էին համաձայնության դեռ մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելը:

Ինչու՞ենք մենք այդպես կարծում: Խնդիրն այն է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ միայն կողոպտիչ, այլև ահավոր նվաստացուցիչ պայմանագիր էր այլևս իր գոյությունը դադարեցրած Հայաստանի Հանրապետության

---

[4] *Նույն տեղում, էջ 684:*

[5] *Նույն տեղում:*

[6] *Նույն տեղում, էջ 507:*

համար: Թուրքական կողմը, բառիս իսկական իմաստով, խեղդում էր հայկական պատվիրակությանն ամեն տեսակի պայմաններով: Հայկական պատվիրակությունը ստիպված էր իր ստորագրությունը դնել այնպիսի հոդվածների տակ, ինչպիսիք էին՝ «… Թուրքիային զիջված շրջաններում, որոնք անվիճելի պատմական, էթնիկական և իրավական կապ ունեն Թուրքիայի հետ»[7], «… Հայաստանի կառավարությունը համաձայնում է. բացի թեթև և երկրի կարգն ու անվտանգությունը պաշտպանելու համար բավարար քանակությամբ զենք ունեցող ժանդարմերիայից, սահմանների պահպանության համար չունենալ այլ ռազմական ուժ, բացի 1500 զինվորից բաղկացած ջոկատից՝ 8 լեռնային կամ դաշտային հրանոթով և 20 գնդացիրով: Զինապարտությունը Հայաստանում պարտադիր չի լինի… Հայաստանին իրավունք է վերապահվում բերդեր (ամրություններ) կառուցել և այնտեղ դնել ծանր հրանոթներ… այնպիսի քանակությամբ, որը նա հարկավոր կհամարի՝ պայմանով, որ չդնի 15 սանտիմետրանոց տրամաչափի և հեռահար հրանոթներ, որոնք գործադրվում են ինչպես հայկական, այնպես էլ ուրիշ բանակներում»[8], «Հայաստանի կառավարությունը սրանով համաձայնում է Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչներին կամ դեսպանորդին, որը հաշտությունը կնքելուց հետո կգտնվի Երևանում, թույլ տալ, ըստ իր ցանկության, տեսչություն և հետաքննություն կատարել վերոհիշյալ պայմաններին վերաբերող հարցերի գծով: Իր կողմից Թուրքիայի… կառավարությունը պարտավորվում է իր զինված օգնությունը տրամադրել Հայաստանին, երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը և երբ Հայաստանի Հանրապետությունը դիմի իրեն մատնանշված խնդրով»[9], «Երևանի կառավարությունը համաձայնում է Սևրի պայմանագիրը, որը կտրականապես մերժել է Թուրքիայի կառավարությունը, համարել և հայտարարել անվավեր»[10] և այլն:

Ըստ էության, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ թե երկու իրավահավասար պետությունների միջև կնքված պայմանագիր է, այլ վավերաթուղթ, որն այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետությունը վերածում էր թուրքական կիսագաղութի:

Այս պայմանագրի առկայության դեպքում պարզապես զարմանալ կարելի է, որ թուրքական պատվիրակությունը, գործնականում առանց դժվարություններ հարուցելու, հայկական կողմին է զիջում նախկին Կարսի մարզից Աղբաբայի շրջանը: Նախքան այս թնջուկի բացատրությանն անցնելը՝ կամենում ենք կանգ առնել մի հարցի վրա ևս: Թվում էր, թե Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան իշխանությունը պետք է ամեն գնով հրաժարվեր Ալեքսանդրապոլի պայմանագրից: Ավելին, խորհրդային պատմաբանները գտնում էին, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք չուներ ստորագրելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Սակայն որքան էլ տարօրինակ լինի, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը,

[7] *Նույն տեղում, էջ 684:*
[8] *Նույն տեղում:*
[9] *Նույն տեղում, էջ 656–657:*
[10] *Նույն տեղում, էջ 657:*

ի դեմս Դ. Կանայանի և նրա խորհրդատու Միլինի, ամեն ինչ արեց, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվի: Ալեքսանդրապոլում գտնվող հայկական պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանը պայմանագիրն ստորագրելուց առաջ հարցում կատարեց նոր իշխանություններին, թե իրենք իրավասո՞ւ են արդյոք ստորագրելու պայմանագիրը: Դ. Կանայանի մանվածապատ պատասխանը, որ պայմանավորված էր իր կողքին գտնվող Միլինի հրահանգներով, անուղղակի հասկացնում էր, որ պայմանագիրը կարող է ստորագրվել: Սակայն պատվիրակությունն էլ որոշակիորեն իր շահագրգռություններն ուներ և բոլորովին դեմ չէր ստորագրելու պայմանագիրը՝ համարելով այն ժամանակավոր փաստաթուղթ: Ս. Վրացյանն Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին հետևյալն է գրում. «Կասկած չկա, որ հայ բոլշևիկներն էլ Մոսկվայի ճնշումով ստիպված պիտի լինեին ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպես մոտ մի տարի վերջը ստորագրեցին Կարսի ավելի խայտառակ դաշնագիրը: Ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտություն էր, դժբախտ, բայց անխուսափելի»[11]: Իրողությունը, իհարկե, այն էր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը դեմ չէր ստորագրել պայմանագիրը՝ պատճառաբանելով, որ թուրքերն առաջ կշարժվեն և նոր արհավիրքներ կբերեն հայ ժողովրդին, իսկ բոլշևիկյան իշխանությունները կամենում էին ազատվել ամեն մի պատասխանատվությունից՝ անուղղակի դրդելով պատվիրակությանը՝ ստորագրելու պայմանագիրը: Համենայն դեպս, դրա օգտին են խոսում Դ. Կանայանի հետևյալ խոսքերը՝ ուղղված Ա. Խատիսյանին. «Հեղափոխական կառավարության անունից հայտնում եմ ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել կամ ոչ»[12]: Կարծես թե պատվիրակությունն իրավունք է ստանում ազատ գործելու, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դրոն էր զանգահարել Ա. Խատիսյանին, պետք է ենթադրել, որ բոլշևիկյան իշխանությունները խիստ անհանգստացած էին, թե պատվիրակությունը չի ստորագրի պայմանագիրը, և աշխատում էին անուղղակի խթանել ստորագրումը: Պատվիրակությունը, անշուշտ, կուզենար ստորագրել պայմանագիրը՝ հեռահար խնդիրներ հետապնդելով, սակայն եթե խորհրդային իշխանությունները ստորագրեին այն, ապա պատվիրակությունը ետ կկանգներ այդ ծրագրից: Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանն անգամ ասել էր Ս. Վրացյանին, թե լավ եք արել, որ ստորագրել եք պայմանագիրը, չնայած մենք կհրաժարվենք դրանից[13]:

Այն, ինչ մի տեսակ թաքնված էր սովորական աչքերից, բացահայտվեց Մոսկվայի պայմանագիրը կնքելիս: Հայտնի է, որ 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը փաստորեն ճանաչել էր Թուրքիայի Ազգային ուխտը, որով Բաթումի և Կարսի մարզերը հռչակված էին Թուրքիայի անկապտելի մասեր. Այլ խոսքով՝ այն տարածքը, որ Բրեստ-Լիտովսկի 1918 թ. մարտի 3-ի պայմանագրով հայտնվում էր Օսմանյան կայսրության վերահսկողության ներքո: Ազգային ուխտով նշված տարածքների

---

[11] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 504:*
[12] *Նույն տեղում, էջ 506:*
[13] *Նույն տեղում:*

մեջ չէր մտնում Սուրմալուն, հետևաբար, Խորհրդային Ռուսաստանը ոչ մի դեպքում այն չէր զիջի Թուրքիային՝ առանց փոխհատուցում ստանալու: Իսկ Մոսկվայի պայմանագիրը հստակ ցույց է տալիս, թե ո՞րն է եղել փոխհատուցումը: Պայմանագրում ասված է. «Թուրքիան համաձայնվում է Վրաստանին զիջել Բաթում նավահանգստի ու քաղաքի և սույն պայմանագրի առաջին հոդվածում նշված սահմանագծից դեպի հյուսիս ընկած և Բաթումի մարզի բաղադրիչ մասը կազմող տերիտորիայի սյուզերենությունը»[14]: Մոսկվայի պայմանագիրը կնքվեց Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ առանց անդրկովկասյան հանրապետությունների մասնակցության: Սա սովորական ավազակային գործարք էր երկու պետությունների միջև, որով Թուրքիան ճանաչում էր Խորհրդային Ռուսաստանի իրավունքն Անդրկովկասի մեծագույն մասի նկատմամբ՝ բացառությամբ Կարսի մարզի մեծագույն և Բաթումի մարզի նշանակալից մասի, որի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքը: Սակայն Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագրով Վրաստանի ՍԽՀ-ին էր միացնում ընդամենը 3000 կմ² տարածք, այն դեպքում, երբ Թուրքիային անցնող Սուրմալուի գավառն ուներ 3750 կմ²: Քաղաքականության մեջ ալտրուիստներ չկան: Բնական է, որ 750 կմ² պետք է Թուրքիան վերադարձներ: Այժմ ամեն ինչ ընկնում է իր տեղը: Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան Հայաստանի Հանրապետությանն էր հանձնում հենց 750 կմ² Կարսի մարզից՝ առանց դժվարություններ հարուցելու: Հայաստանի ՍԽՀ-ն մինչ մարզային վարչական բաժանումը բաղկացած էր 37 շրջանից և դրանցից՝ Ամասիայի շրջանը, որ ստեղծվել էր նախկին Կարսի մարզի հյուսիսարևելյան հատվածում, ուներ 608 կմ² տարածք[15]: Անշուշտ, 608 կմ²-ն 750 կմ² չէ: Սակայն չմոռանանք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի Հանրապետությանն անցնում էին նաև Տիխնիս (Տիգնիս), Մեծ Ղմլու (պայմանագրում՝ Մեծ Կեմո) և Ղրզբլ-դաշ գյուղերը՝ իրենց շրջակա տարածքներով, որոնց ընդհանուր չափը կազմում է շուրջ 140–142 կմ²: Այժմ ամեն ինչ հստակ է դառնում: Թուրքիան դեռևս 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով գրավում է Հայաստանի Հանրապետությունից ոչ միայն Կարսի մարզը, այլև՝ Երևանի նահանգի Սուրմալուի գավառը և Կարսի մարզի հաշվին ՀՀ-ին է զիջում այդ 750 կմ² տարածքը: Եվ դա անում է այն Թուրքիան, որը Հայաստանից անջատել էր նաև Նախիջևանի, Շարուրի և Շահթախտիի շրջանները: 750 կմ²-ն Հայաստանի Հանրապետությանը զիջելը մնում է անհասկանալի և անբացատրելի, եթե մենք չենք հանգում այն մտքին, որ տարածքային բաժանման հարցում արդեն մինչ այդ հստակ ծրագիր էր մշակվել Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Ս. Վրացյանը, անդրադառնալով Ալեքսանդրապոլի պայմանագրից մինչև Մոսկվայի ու Կարսի պայմանագրերն ընկած ժամանակներին, գրում

---

[14] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 500:*

[15] *Հայկական ՍՍՀ վարչա-տնտեսական բաժանումը առ 1-ը օգոստոսի 1988 թ., Երևան, 1988, էջ 16:*

է. «Եթե բոլշևիկները, իրոք, այնքան ազդեցիկ էին թուրքերի առջև, նրանց համար դժվար չէր լինի մերժել դաշնակների ստորագրությունը և Հայաստանի համար ավելի նպաստավոր դաշնագիր կնքել: Եթե բոլշևիկները այդ կարողությունը պիտի չունենան վաղը, նշանակում է՝ այսօր էլ նրանց խոստումները անարժեք էին»[16]: Անկեղծորեն ասած՝ կարելի է լոկ զարմանալ Ս. Վրացյանի միամտության վրա: Բոլշևիկներին պարզապես պետք չէր գնալ թուրքերի հետ ձեռք բերած իրենց պայմանավորվածությունների դեմ: Իրենց պետք էր միայն տարածքային զիջումների մեղքը բարդել Հայաստանի Հանրապետության կառավարության վրա և հետո հայտարարել, որ իրենց չհաջողվեց փոխել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Շարունակելով իր միտքը՝ Ս. Վրացյանը, ինչպես վերն արդեն ասվեց, գրում է. հայ բոլշևիկներն էլ Մոսկվայի ճնշումով ստիպված պետք է լինեին ստորագրել այդ դաշնագիրը, ինչպես մոտ մի տարի վերջը ստրագրեցին Կարսի ավելի խայտառակ դաշնագիրը: Ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտություն էր, դժբախտ, բայց անխուսափելի[17]: Պետք է ասել, որ Ս. Վրացյանը գերագնահատում է հայ բոլշևիկներին, որոնց խոսքն անգամ չուզեցին լսել մոսկովյան իշխանությունները Մոսկվայի պայմանագիրը ստորագրելիս և ստիպեցին անդրկովկասյան խորհրդային հանրապետություններին գառնուկի պես ստորագրել Կարսի պայմանագիրը:

Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերը համադրելիս զարմացնում է մի հանգամանք, թե ինչու Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագրով Թուրքիային զիջեց Տիխնիս (Տիգնիս), Մեծ Ղմլու (պայմանագրում՝ Մեծ Կեմո) և Ղրզըլդաշ գյուղերի շրջանը, ինչը չի տեղավորվում առողջ տրամաբանության մեջ: Տարածք զիջելու հարցում Մոսկվայի և Կարսի պայմանագրերն ավելի խայտառակ էին, ինչպես կարծում է Ս. Վրացյանը: Սակայն եթե ճիշտը խոստովանենք, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի խայտառակության խնդրում սկզբունքային տարբերություն չկա: Եթե ՀՀ-ն Ալեքսանդրապոլի պայմանագրով վերածվում էր թուրքական կիսագաղութի, ապա Մոսկվայի պայմանագրով, որի կրկնօրինակն է Կարսի պայմանագիրը, Հայաստանի ՍԽՀ-ն վերածվում էր խորհրդային ռուսական տերության մի մասի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ըստ երևույթին, որքան էլ ապիկար էին Հայաստանի ՍԽՀ ղեկավարները, այնուամենայնիվ, նրանք էլ դժգոհ են եղել այդ երեք գյուղերն իրենց շրջակա տարածքներով Թուրքիային հանձնելու համար: Առավել ևս, որ, հանձնելով այդ երեք գյուղերը, Խորհրդային Ռուսաստանը նույնիսկ փորձ չէր արել Անիի պատմամշակութային տարածքը պահելու Հայաստանի ՍԽՀ կազմում: Մենք չենք նայել արխիվային փաստաթղթերը, սակայն պատմական տրամաբանությունն աներկբա է դարձնում այդ իրողությունը: Հետևանքն անմիջապես զգացվեց: 1921 թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագրում տեսնում ենք, որ փոփոխված է Հայաստանի ՍԽՀ սահմանը Նախիջևանի ինքնավար շրջանի հատվածում: Եթե նախկինում

---

[16] *Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 504:*

[17] *Նույն տեղում:*

սահմանը սկսվում էր Կարասու գետը Արաքսի մեջ թափվելու վայրից, այժմ շուրջ 150 կմ² Կարասու-Արաքսի ջրկիցի, Սարայ-Բուլաղ լեռների և Արագդայան կայարանի եռանկյունում տրվում էր Խորհրդային Հայաստանին: Եզրակացությունը պարզ է. շատ լավ, դուք կորցրել եք 140–142 կմ², մենք ձեզ վերադարձնում ենք այդչափ տարածք: Բայց որ շարունակում էին Նախիջևանի մեջ մնալ հայկական բազմաթիվ գյուղեր, խորհրդային Ռուսաստանին բացարձակապես չէր հետաքրքրում:

Համփոփումն այս ամենի՝ կամենում ենք կանգ առնել մի հարցի վրա ևս: «Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հաշտության պատվիրակությունների եզրափակիչ որոշման արձանագրության» մեջ ռուսական կողմը խոստանում էր հասնել այն բանին, որ «Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությունն իր զորքերը հետ կքաշի մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանագիծը»[18] և, օգտվելով իր համար բարենպաստ կացությունից, ստիպում էր Հայաստանի Հանրապետությանը, որ այն հրաժարվի ամեն պահանջից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»[19]:

Եթե 1920 թ. հոկտեմբերի 28-ին Խորհրդային Ռուսաստանը գոնե խոստանում էր ապահովել Հայաստանի Հանրապետության հարավարևմտյան սահմանների անվտանգությունը ռուս-թուրքական 1914 թ. սահմանագծի չափով, ապա ՌՍՖԽՀ և Հայաստանի ՍԽՀ 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված համաձայնագրով ճանաչում էր միայն ՀՍԽՀ իրավունքը Կարսի մարզի մի մասի նկատմամբ, որն անհրաժեշտ էր երկաթուղու պաշտպանության համար[20]: Չիտսելով մյուս խոստումների մասին (դրանք քննության այլ նյութ են)՝ նշենք, որ Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագրում լրիվ մոռացավ իր խոստումների մասին և խոսքը հանգեց միայն թուրքական բլոկհաուզները սահմանից 4–8 վերստ հեռավորության վրա տեղադրելուն[21], որով, իբր, կապահովվեր երկաթուղու անվտանգությունը:

Ի մի բերելով վերն ասվածը՝ հանգում ենք հետևյալ եզրակացությանը.

ա. ռուս-թուրքական համաձայնությունը Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանի հատվածում կայացել էր դեռ մինչև Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը:

բ. Թուրքիան զավթեց Հայաստանի Հանրապետությունից Սուրմալուի գավառը Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ, որի դիմաց վերջինս Վրաստանի ՍԽՀ-ին կցեց Բաթումի մարզի 3000 կմ² տարածք: Եվ քանի որ Սուրմալուի գավառն ուներ 3750 կմ², ապա տարածքային տարբերությունը վերացվեց՝ Հայաստանի Հանրապետությանը զիջելով Աղբաբայի շրջանն ու Տիգնիս, Մեծ Ղմլու և Ղըզըլ-դաշ գյուղերը՝ իրենց շրջակա տարածքով, որը, իրոք, կազմել է 750 կմ²:

---

[18] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 457:*

[19] *Նույն տեղում, էջ 457:*

[20] Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении. Сб. док. Ереван, 1957, с. 441.

[21] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 506–507:*

գ. Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը վերածվում էր Թուրքիայի կիսագաղութի: Խորհրդային իշխանությունները ձգտում էին, որ պայմանագիրը ստորագրեն դաշնակները, որպեսզի ամբողջ մեղքը նրանց վրա բարդեն: Սակայն դաշնակցական պատվիրակությունն էլ, ինչ-ինչ նպատակներ հետապնդելով, դեմ չէր պայմանագիրը ստորագրելուն:

դ. Մոսկվայի պայմանագրով, որին Հայաստանի ՍԽՀ-ի պատվիրակությանը թույլ չէր տրվել մասնակցել, անդրկովկասյան խորհրդային հանրապետությունները պարզապես ներառվում էին խորհրդային կայսրության մեջ:

ե. Խորհրդային Ռուսաստանը վարում էր կայսերապաշտական որոշակի քաղաքականություն և նրան հետաքրքրում էր միայն մի խնդիր, որ այս կամ այն տարածքը ներառվի խորհրդային կայսրության մեջ՝ անկախ այն բանից, թե հիշյալ տարածքները որ հանրապետության մաս կկազմեն:

К ВОПРОСУ О СОПОСТАВИТЕЛЬНОМ РАССМОТРЕНИИ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО И МОСКОВСКОГО ДОГОВОРОВ

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

Республика Армения потерпела поражение в развязанной кемалистской Турцией турко-армянской войне 1920 г., и была вынуждена подписать более чем унизительный Александропольский договор (02.12.1920), уступив свои территории в Карсской области, кроме Ардаганского и Чылдырского районов, оккупированных грузинскими войсками, Сурмалинский уезд и Шаруро-Нахичеванский край Эриванской губернии, и согласившись довольствоваться армией в 1500 солдат, 8 пушек и 20 пулеметов под диктатом Турции. Александропольский договор был справедливо раскритикован советской исторической наукой и в трудах зарубежных армянских политических деятелей и историков. В качестве противовеса советская историография противопоставляла подписанный 16 марта 1921 г. русско-турецкий Московский договор. Сопоставительный анализ этих двух договоров буквально шокирует исследователя. Во-первых, Московский договор, по сути, в территориальных вопросах даже хуже Александропольского, ибо туркам уступили также селения Тихнис (Тигнис), Большой. К'ымлу и Кызылдаш, которые по армяно-турецкому договору объявлены были частью Республики Армения. Следует отметить, что турки, которые во время переговоров буквально душили армянскую делегацию, без сопротивления уступили в пользу Республики Армения Агбабинский район Карсской области. Анализ ситуации показывает, что это было связано с передачей Батумского порта и сопредельной территории Грузии, которая была 25 февраля 1921 г. советизирована. Батумский край, отошедший к Грузии, с правом местного населения на автономию, занимал территорию в 3000 км^2, тогда как отданный туркам Сурмалинский уезд – 3750 км^2. Разница в 750 км^2 весьма весома. Амасийский или

бывший Агбабинский район в Армянской ССР с территорией в 608 км^2 с включением территории вышеназванных селений (140–142 км^2) и составляет 750 км^2. Анализ приводит к заключению, что пункты Александропольского договора были согласованы со стороны Турции и России еще до подписания договора.

Остается лишь загадкой, почему по Московскому договору от 16 марта 1921 г. вышеназванные селения были уступлены туркам, что вызвало недовольство даже зависимого руководства ССР Армении. По всей вероятности, недовольство это было так справедливо, что Советская Россия решила возместить эту утрату за счет Шаруро-Нахичеванского края, передав ССР Армении по Карсскому договору от 13 октября 1921 г. территорию такой же величины за счет вышеназванного края.

По итогам данного анализа можно прийти к следующим выводам:

а) Русско-турецкое соглашение по отрезку северо-восточной границы Турции состоялось еще до подписания Александропольского договора.

б) Сурмалинский уезд Республики Армения был захвачен Турцией с согласия Советской России. Вместо него Советская Россия присоединила к Советской Республике Грузии 3000 км^2 территории из Батумской области. И поскольку разница составила 750 км^2, ССР Армении были переданы Агбабинский район и селения Тихнис (Тигнис), Большой К'ымлу и Кызылдаш с сопредельной территорией.

в) По Александропольскому договору Республика Армения превращалась в полуколонию Турции. Советские власти добились того, что договор подписали дашнаки, чтобы впоследствии можно было переложить всю вину на них. Однако, преследуя далеко идущие цели, к большому сожалению, дашнаки сами не были против подписания договора.

г) По Московскому договору, во время подписания которого к переговорному процессу делегация ССР Армении даже не была допущена, закавказские советские республики просто были включены в Советскую империю, превратившись в сателлитов Советской России.

д) Советская Россия проводила имперскую политику и ее интересовала лишь одна проблема – присоединить данную территорию к Советской империи, независимо от того, частью какой республики она станет. Интересы ослабевшей ССР Армении приносились в жертву имперским интересам Советской России.

ON THE QUESTION OF COMPARATIVE STUDY OF THE ALEXANDROPOL AND MOSCOW TREATIES

BABKEN HARUTYUNYAN

S u m m a r y

The Republic of Armenia was defeated in the Turkish - Armenian war of 1920 launched by Kemalist Turkey and was forced to sign more than humiliating Alexandropol Treaty

(02.12.1920), ceded its territories in the Region of Kars besides the districts of Ardahan and Childir, occupied by Georgian troops, the district of Surmalu and borderland of Sharur-Nakhijevan of the Erivan province, agreed to be content with the army of 1500 soldiers, 8 guns and 20 machine-guns under the dictate of Turkey. The Alexandropol Treaty was fairly criticized by Soviet historical science and in the works of political figures and historians of the Armenian Diaspora. As a counterbalance the Soviet historiography opposed the Russian-Turkish Moscow Treaty signed on March 16, 1921. The comparative analysis of these two treaties word for word shocks the researcher. First of all the Moscow Treaty, in point of fact even is worse in territorial questions than the Alexandropol Treaty, because the villages of Tikhnis (Tignis), Gr. Kmlu and Kizildash, which were declared the part of the Republic of Armenia according to the Armenian-Turkish Treaty were also ceded to the Turks. It should be noted, that the Turks which strangled word for word the Armenian delegation during negotiations without resistance ceded the district of Aghbaba in the Kars Region to the Republic of Armenia. The analysis of the situation shows that this was connected with the transfer of the port of Batum and the adjacent territory of Georgia, sovietized on February 25, 1921. The district of Batum moved away to Georgia with the right of the local population to the autonomy, occupied a territory of 3000 km^2 whereas the transformed district of Surmalu had 3750 km^2. The difference of 750 km^2 is quite weighty. Amasia or the former Aghbaba district of the Armenian SSR with the occupied territory of 608 km^2 and the territories of the overcalled villages (140–142 km^2) put together are 750km^2. Such analysis brings to the conclusion that the articles of the Alexandropol Treaty were coordinated between the Russian and Turkish sides before the signing of the Treaty.

It remains a puzzle, why according to the Moscow Treaty of March 16, 1921 the overcalled villages were ceded to Turks, which provoked even the dependent governing body of SSR of Armenia. In all probability, this discontent was so fair that Soviet Russia decided to compensate this loss transferring to the SSR of Armenia such a territory from the region of Sharur -Nakhijevan according to the Kars Treaty.

According to the results of this analysis it is possible to come to the following conclusions:

a) The Russian-Turkish Agreement in the part of North East border of Turkey took place even before the signing of the Alexandropol Treaty.

b) The district of Surmalu of the Republic of Armenia was taken by Turkey by the consent of Soviet Russia annexing in return to Soviet Georgia a territory of 3000 km^2 from the Region of Batum. And so far as the difference was 750 km^2, the district of Aghbaba and the villages of Tikhnis (Tignis), Gr. Kmlu and Kizildash with the adjacent territory were transferred to the SSR of Armenia.

c) According to the Alexandropol Treaty the Republic of Armenia became the semi-colonial territory of Turkey. The Soviet power achieved the result, that the Treaty was signed by the Dashnaks, because afterwards it would be possible to shift the guilt onto them. Though, having far going goals, the Dashnaks themselves were not against the signing of the Treaty.

d) According to the Moscow Treaty during the signing of which the delegation of the SSR of Armenia was not even allowed to participate in the negotiation process, the Transcaucasian Soviet republics were simply included in the Soviet empire, turning into satellites of Soviet Russia.

e) Soviet Russia conducted imperial policy and it was interested only in the problem to connect the given territory to the Soviet empire, independently the part of which republic it would become. The interests of weakened SSR of Armenia sacrificed to the imperial interests of Soviet Russia.